ՐԱՖՖԻ

Իսրայելը Բաբելոնում

Իսրայելը Բաբելոնում

Բաբելացվոց գետերու մոտ
Մենք հարենյաց կողբայինք սուգ,
Եվ Սիովնը միտ բերելով,
Կըթափեինք դառն արցունք:
Պանդուխտ երկրի ուռիներեն
Մեր քնարները՝ լուռ ու մունջ
Մենք կախեցինք, եւ զեփյուռեն
Հնչեն լարերն դառն մրմունջ:

Մեր գերիչքը կարեկցաբար
Ասում էին ստիպելով.
Մեզ Սիովնի՛ երգեք երգեր,
Մի՛ վրդովեք մեզ ձեր լալով:

Տիրոջ երգն ինչպե՞ս երգենք
Օտար երկրի կամարի տակ,
Օտար երկրում ինչպե՞ս պատմենք
Մենք Սիովնի սուրբ հիշատակ:

Երուսաղե՛մ, Երուսաղե՛մ,
Եհովայի ով սուրբ տաճար,
Իմ աջ ձեռքս թող չորանա՛,

Երբ մոռանամ քո սերն անճառ:

Երբ չհիշեմ քեզ մի րոպե,
Թող իմ լեզուս փակչի քիմքիս,
Եվ հավիտյան թող մունջ մնամ,
Երբ քեզ համար չտամ հոգիս:

Երբ, տե՛ր, Սալիմե կխնդրես վրեժ,
Հիշե Եդովմի անգութ զավակներ,
Որք ասում էին՝ «փլուցե'ք դորան,
Փլուցեք դորա հիմն ու հատակներ»:

Ով Բաբելոնի դստրիկ թշվառ,
Քանի դառնությանց մեզ եղար պատճառ:
Երանի նրան, որ պատիժ արդար՝
Քո չարիքներին փոխարեն կտար:

Երանի նրան, որ քո զավակներ
Յուր վրեժխնդիր ձեռքովն անխնա՝
Կառներ մոր գրկեն, լալով, ճչալով,
Կառներ, կզարկեր քարերու վերա: